ապացույցներ: Բացի այդ, հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել են միջնորդություններ և դիրքորոշումներ:
Արդյունքում՝ հաշվի առնելով փաստաբանի կողմից գործով փաստացի կատարված աշխատանքի ծավալը և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը, գործի առանձնահատկությունը, նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, հաշվի առնելով այն, որ հայցը բավարարվում է ամբողջությամբ՝ Դատարանը կարծում է, որ հայցվորի փաստաբանի խելամիտ վարձատրության չափ պետք է համարել 100.000 ՀՀ դրամ գումարը և այն ներառել գործով դատական ծախսերի մեջ: Դատարանը նման եզրահանգման է գալիս նաև այն պառճառաբանությամբ, որ սույն գործը քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով՝ գրավոր ընթացակարգով երեսուն օրվա ընթացքում: Հետևաբար, փաստաբանի կողմից գործի քննությանը մասնակցության աստիճանը նվազում է պայմանավորված վերը թվարկված հանգամանքներով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԱՍ-777» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ–ի կարիքների համար «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական մասի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԲԿ-ԲՄԱԾՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 1.1 կետով «ԱՍ-777» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ–ի կարիքների համար «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական մասի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԲԿ-ԲՄԱԾՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 2.3-րդ կետով «Արմեն-Շին» ՍՊԸ և «Արամե» ՍՊԸ /կոնսորցիում/-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. Անվավեր ճանաչել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ–ի կարիքների համար «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական մասի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԲԿ-ԲՄԱԾՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 1.1 կետով «ԱՍ-777» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. Անվավեր ճանաչել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ–ի կարիքների համար «Արմավիր ՔԿՀ» տարածքում գտնվող բժշկական

մասի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔԲԿ-ԲՄԱՇՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 2.3-րդ կետով «Արմեն-Շին» ՍՊԸ և «Արամե» ՍՊԸ /կոնսորցիում/-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

4.«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ից հօգուտ «ԱՍ-777» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

5. «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ից հօգուտ «ԱՍ-777» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Թ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am